«Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս մի Թռլան Դաւիթ*),
ա՜խ հալա Թռլան Դաւիթ»։

—Խրօխպէր, քիւ բերան կուտրէր՝ էն մէկ խօսք չ՚տէր. որ չ՚տէր՝ իս քիւ վիզ տը կտրէր։

Դաւիթ էլաց, էկաւ, խրօխպօր գլեոխ պագնից. խրօխպէրն էլ էտու գլեոխ պագնից։

Ջուհաբ կինաց Ցռան-Վերգեոն.—Վերգեոյ, ըսըցին, Դաւիթ կինաց Մսրամելիքի վերայ կռիւ։

Ծըծղաց, էսաց.—Կեացէք, Սասմայ շաղկիմակիր Դաւթին ասէք, Մըսրամելիքի ձախ ձիւն ձը խամար բիրիս։

Դաւիթ կանչից ուր Աստուած, էսաց.

«Ո՜վ քիւրիր[1]), կացէք բարով,
Ընձի քիւրիթին էք էրի.
Ո՜վ մէրիր, կացէք բարով,
Ձի մէրութին էք էրի.
Բարի՜ տիրկիցնիր[2]), կացէք բարով,
Կացէ՜ք բարով միծ ու պստկով»։

Խրօխպէր էսաց.—Ա՜յ որտի, որ տ՚երթաս, քի մէկ շիրաթ[3]) կ՚էնիմ, ականջ կ՚դնիս իմ շիրաթին. որտեղ քիւ ձին չոքիր[4]) կ՚զարկի գետըն, էնդեղ կ՚քինիս. քիւ ձին կ՚կապիս, քիւ ձիու էմ[5]) կ՚ըտաս, քիւ տեղն էլ կ՚շինիս ձիու չուրս ոտաց մէջ։ Որ կ՚ընիս, կ՚երթաս, դեաշտի մէջ պողվըտէ սուն ըմ կայ, քիւ խէր որ կռիւ էրթէր, կ՚զարկէր պողվըտէ սուն, որ կտրէր՝ էնու բան յաջող էր, կ՚երթէր. որ չ՚կտրէր, կ՚դառնէր, կ՚գէր տուն։ Տիւ էլ որ էրթաս, պողվըտէ սուն կըխիս[6]), թուր զարկիս պողվըտէ սուն, որ կտրից էթալ քիւ բան յաջող ի, կանչը Աստուած, կինա դեախ քիւ կռիւ. որ չկտրից՝ դառնաս, կեաս քիւ տուն։

---

[1]) Քոյրեր։ [2]) Դրացիներ։ [3]) Խրատ։ [4]) Ծնկներ։ [5]) Կերակուր, ուտելիք։ [6]) Կընայես, կ՚տեսնես։

*) Ա. վարիանտով՝
«Ափսո՜ւս, խազա՜ր ափսուս իմ թանգ Թռլան Դաւիթ»։